ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/26

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.02.2018թ. թիվ 04/26-3/2619-18 գրությամբ «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 06.02.2018թ. թիվ 01/61-2576 գրության հիման վրա, 15.02.2018թ. թիվ 04/26-3/2619-18 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 17.02.2018թ. թիվ 33/18 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ կարգ)՝ Երևանի քաղաքապետարանը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի Ընկերության «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը չի բավարարել օրենքով սահմանված պահանջներին: Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքն ավել է եղել ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքից:

Ընկերությունը նշել է, որ «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն նորաստեղծ ընկերություն է: Ժամանակակից և նորագույն սարքավորումներով հագեցնելու համար Ընկերությանն անհրաժեշտ է եղել հսկայական ֆինանսական ներդրումներ, որոնք տրամադրվել են բանկի և հիմնադրի կողմից՝ երկարաժամկետ պայմանագրային հիմքումներով, այդ իսկ պատճառով «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքն ավելի մեծ է, քան ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 20.02.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 06.02.2018թ. թիվ 01/61-2576 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն:

Պտվիրատուն, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով, հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետից ուշ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը չի բավարարում հրավերով և օրենքով սահմանված պահանջներին: Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը ավել է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքից:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով, առաջարկել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրում շտկել առկա անհամապատասխանությունը, սակայն սահմանված ժամկետում Ընկերության կողմից Ընկերության կողմից

անհամապատասխանությունը չի շտկվել և գնահատող հանձնաժողովը, օրենքի պահանջներին համաձայն, մերժել է վերջինիս հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 20.02.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/26 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/26 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն 28.12.2017թ. հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 19.01.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի ***հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է 2 249 218 940 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 1 413 795 011 ՀՀ դրամ:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը, որը սակայն Ընկերության կողմից չի շտկվել:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 24.01.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.02.2018թ. թիվ 04/26-3/2619-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 06.02.2018թ. թիվ 01/61-2576 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն

հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է

իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի 3-րդ պարբերությունը սահմանում է, որ մասնակցին ներկայացվող «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

Հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.13-րդ ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Նույն կետի 8.19-րդ ենթակետի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

Հրավերի 8-րդ կետի 8.21-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«ԵՔ-ԳՀԾՁԲ-18/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն 28.12.2017թ. հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 19.01.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի ***հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է 2 249 218 940 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 1 413 795 011 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը, որը սակայն Ընկերության կողմից չի շտկվել:

Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.01.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը, որը կազմում է 2 249 218 940 ՀՀ դրամ, գերազանցում է Ընկերության ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը (1 413 795 011 ՀՀ դրամ), մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:***

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: ***Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված***

պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության վերաբերյալ, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը չի բավարարում հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը, Խորհուրդը գտնում է,

որ «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն «ԵՔ-ԳՀԾՁԲ-18/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.02.2018թ. թիվ 04/26-3/2619-18 գրությամբ «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00111893) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Սլավմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**